

նուելով՝ Փարսիս անունը կը կրէր. հո՛ն կ'ապրէին չորս հարիւրի մօտ կոյսեր: Պարսիկները վանքը կործանեցին, կոյսերը դժնէաբար հոս հոն ցրուեցին: Հարանց Վարքի նոյն էջերուն մէջ կը պատմուի հալածուած կոյսերէն միոյն զիւցազնական առաքինութիւնը:

Զիթենեայ լեռան Բլրի եկեղեցիին նկարագրութեան առթիւ, տեւէ յիշատակութիւն չըրինք նոյնին սեպհականութեան մասին: Ինչպէս կ'երեւի գրաւոր յիշատակարանաց հետքերէն, վաղեմի դարերէ սկսեալ, նոյն եկեղեցիին սեպհականութիւնը կը վերաբերէր Հայ Միաբանութեան: Այս մասին հայ ժամանակագիր մը կը գրէ թէ արար պատմագրաց մէջ գրուած է որ Համբարձման եկեղեցին կը վերաբերէր հայոց (Ստրագրոսթիւն Երուսաղէմի, էջ 308): Արդէն 1529ին, Յովհաննէս պօրք. Ս. Համբարձման եկեղեցւոյն գմբէթը, որ երկրաշարժէն խարխլած էր, դատաւորին վճռով նորոգել կու տայ, եւ 1560ին, Անդրէաս պատրիարքը դարձեալ վաղեմի իրաւանց հիման վրայ եւ դատարանի վճռագրով, կը յաջողի ամբողջութեամբ նորոգել նոյն եկեղեցին. 1617-ին ալ, Գրիգոր Պարոնտէր, պաշտօնական վաւերագրոց ոյժով, կ'արգելու տեղւոյն մէկ դրացիին անտեղի ոտնձգութիւնները: Հայոց Միաբանութիւնը 1836ին, առանց հակառակելու ուրիշ Միաբանութեանց կողմէ նոյն եկեղեցիին մէջ կատարուած պաշտամունքին և արարողութեանց, կարևոր նորոգութիւններ կը կատարէ նոյն եկեղեցւոյն մէջ, և կը կառուցանէ յարակից շէնքեր՝ համաձայն ա'յն արտօնութեանց, զորս ձեռք բերած էր Հիճրէթի 1022 ին, Սուլթան Ահմէտ Ա. ի օրով, որուն զօրութեամբ նաև ստացած էր Հիճ. 1250, 1251 և 1252 թուական հրովարտակները: 1838 ին սակայն, Լատինք և Յոյնք կը հակառակին այս նորոգութեանց, կը ջանան բեկանել տալ ստացուած հրամանագրերը, և այլ և այլ ազդեցութիւններու միջոցաւ, ի մեծ վիշտ քրիստոնէութեան, 1839 ին քանդել կու տան շինութիւնները, և հոն հիմակ աւերակներն են որ կ'իշխեն: Մանրամասնութիւնները տեսնել (Սաւադանեանց, Բ. հտր. էջ 993-999. Ժանաւանկազրական Պասուրթիւն Երուսաղէմի, հտր. Ա. էջ 251, 271, 290, Բ. 439 և այլն, «Բովանդակութիւն Ազգ. Սեփ.» էջ 94-95):